



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆՏԻՈՒԿԻԱ - ԼԻՈՆԱՆ

Անթիլիաս. 199

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԳԱՀԱԿԱԼԻՆ

Այսօր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ապրեցաւ պատմական օր մը, երբ իր թեմերէն (Սուրիա, Լիբանան, Պարսկաստան, Կիպրոս, Յունաստան Միացեալ Նահանգներ եւ Քանադա, Քուէյթ եւ Արաբական Մոցլի երկիրներ) եկած 180 պատգամաւորներ ընտրեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսը՝ յանձին Լիբանանի թեմի Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տ. Արամ Արք. Քէշիշեանի:

Պատգամաւորական ժողովը առաջին փուլէն քուէարկութեամբ Միաբանական Ժողովէն թիւած հնգանուն եւ Հայց. Եկեղեցւոյ եպիսկոպոսաց ընդհանուր ցանկերէն ընտրեց եռանուն ցանկ մը, որ պարզեց հետեւեալ պատկերը.-

Տ. Արամ Արք. Քէշիշեան	149 ձայն
Տ. Մեսրոպ Արք. Աշնեան	122 ձայն
Տ. Զարեհ Արք. Ազնաւորեան	113 ձայն

Ապա, երկրորդ փուլէն քուէարկութեամբ եռանուն այս ցանկէն Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուեցաւ Տ. Արամ Արք. Քէշիշեան, ստանալով 140 քուէ:

Նորընտիր Գահակալին Օծումը տեղի պիտի ունենայ Շաբաթ 1 Յուլիս, 1995 երեկոյեան ժամը 7-ին Անթիլիասի Մայրավանքին մէջ:

ԴԻԻԱՆ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ